ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

N 16
« 11 » փետրվարի 2020 թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Այգեվան համայնքում 2020 թվականի ապրիլի 5-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի համար համայնքի ղեկավարի կողմից կայացված որոշումները համայնքում տեղամասային կենտրոն սահմանելու, քարոզչական պաստառներ փակցնելու, ինչպես նաև համայնքում անվճար դահլիճ տրամադրելու մասին համաձայն հավելվածի:

Առդիր համայնքի ղեկավարի որոշումներն կից հավելվածով՝ « 4 » թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

0931 Այգեվան համայնք 5փ. 8շ., Հեռ. 093371396, Էլ.փոստ՝ aygevan.armavir@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«11» փետրվարի 2020 ԹԻՎ 3

ՈՐՈՇՈՒՄ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի թիվ 18-րդ հոդվածի
1-ին կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2020 թ-ի ապրիլի 5-ին Արմավիրի մարզի Այգեվան համայնքում կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի համար թիվ 16/23՝ ընտրական տեղամասի ընտրատարածք սահմանել Այգեվան համայնքի «Մովսես Խորենացու» անվան միջնակարգ դպրոցի շենքը, հասցեն՝ 5-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 13 շենք:
2. Տեղամասային կենտրոնի տարածքի պատասխանատու նշանակել Այգեվան համայնքի ղեկավարի տեղակալ՝ Արմեն Էդվարդի Շիրոյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«11» փետրվարի 2020թ.
Այգեվան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«11» փետրվարի 2020 ԹԻՎ 4

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության « Ընտրական օրենսգրքի » 21-րդ հոդվածի 3-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Սահմանված կարգով քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տարածք տրամադրել Արմավիրի մարզի Այգեվան համայնքի 5-րդ փողոցի թիվ 12 շենք հասցեում գտնվող կուլտուրայի տան ճակատային մասից 10 մ²:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«11» փետրվարի 2020թ.
Այգեվան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«11» փետրվարի 2020 ԹԻՎ 5

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՎՃԱՐ ԴԱՀԼԻՃՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի երկրորդ մասով 2020 թ-ի ապրիլի 5-ին Արմավիրի մարզի Այգեվան համայնքում կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի համար ընտրողների հանդիպումների և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել անվճար դահլիճ՝ Արմավիրի մարզի Այգեվան համայնքի «Մովսես Խորենացու» անվան միջնակարգ դպրոցը, հասցեն՝ 5-րդ փողոցի 1-ին նրբանցքի թիվ 13 շենք, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«11» փետրվարի 2020թ.
Այգեվան համայնք

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2018թ. ապրիլի 9-ի
N 6-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՆՐԱՔՎԵԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Քարոզչության ազատ իրականացման նպատակով ժողովներ, հանդիպումներ և հանրաքվեի հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով հանրաքվեի քարոզչության կողմերին անվճար հիմունքներով դահլիճներ և այլ շինություններ տրամադրվում են «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և սույն կարգի համաձայն:

2. Հանրաքվեի նշանակումից ոչ ուշ, քան յոթ օր հետո համապատասխան մարզպետը, Երևանում՝ Երևանի քաղաքապետը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում քարոզչության կողմերին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը (այսուհետ՝ ցանկ):

3. Հանրակրթական ուսումնական հաստատությունների դահլիճները ներկայացվող ցանկերում կարող են ներառվել միայն այն դեպքերում, եթե տվյալ համայնքում (Երևանի վարչական շրջանում) գոյություն չունեն քարոզչության անցկացման համար համապատասխան այլ դահլիճներ: Հանրակրթական ուսումնական հաստատությունների դահլիճները կարող են տրամադրվել միայն ժամը 18:00-ից հետո կամ ոչ աշխատանքային օրերին:

4. Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվող ցանկը պետք է տեղեկություններ պարունակի դահլիճի, շինության անվանման, գտնվելու վայրի (հասցե), նստատեղերի թվի, տրամադրման ժամերի վերաբերյալ, ինչպես նաև դահլիճը, շինությունը տնօրինողի վերաբերյալ, որին պետք է ներկայացվի դիմումը:

5. Ցանկերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ սույն որոշման N 2 հավելվածով սահմանված ձևով:

Ցանկի էլեկտրոնային տարբերակը ներբեռնվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքից և լրացվում տարբերակում նշված եղանակով:

6. Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այդ ցանկերը տեղադրում է համացանցային կայքում՝ մինչև սույն կարգի 2-րդ կետով սահմանված վերջնաժամկետի ավարտը:

7. Ցանկում ներառված դահլիճից, շինությունից օգտվելու նպատակով քարոզչության կողմի լիազոր ներկայացուցիչը միջոցառման կազմակերպման օրվանից առնվազն 3 օր առաջ դիմում է դահլիճը տնօրինող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարին:

Դիմումը ներկայացվում է գրավոր և պետք է պարունակի՝

1) դահլիճը (շինությունը) տնօրինողի անվանումը, որին ներկայացվում է դիմումը.

2) դիմողի անունը, ազգանունը, քարոզչության կողմի անվանումը.

3) դիմողի հասցեն, հեռախոսահամարը (առկայության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն).

4) դահլիճի (շինության) անվանումը, որտեղ անցկացվելու է միջոցառումը.

5) միջոցառման օրը և ժամը.

6) միջոցառման պատասխանատուի անունը, ազգանունը, հեռախոսահամարը (առկայության դեպքում՝ էլեկտրոնային փոստի հասցեն).

7) դիմումի տրման տարին, ամիսը, օրը և դիմողի ստորագրությունը:

Դիմումին կից պետք է ներկայացվի դիմումատուի կարգավիճակը հավաստող փաստաթղթի (սահմանված նմուշի վկայականի) պատճենը:

8. Դահլիճը (շինությունը) տնօրինող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը դիմումը ստանալուց հետո՝ 2 օրվա ընթացքում, դիմումատուին գրավոր տեղեկացնում է դահլիճը տրամադրելու մասին:

Եթե դահլիճը դիմումատուի նշած ժամանակահատվածում հնարավոր չէ տրամադրել, ապա դահլիճը (շինությունը) տնօրինող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը պետք է առաջարկի այն ժամանակահատվածը, որի դեպքում հնարավոր է համապատասխան դահլիճի տրամադրումը կամ առաջարկի ցանկում ներառված այլ դահլիճ:

Եթե ցանկում ներառված դահլիճը նույն օրը և ժամին տրամադրելու պահանջով ներկայացվել են մեկից ավելի դիմումներ, ապա այն տրվում է քարոզչության այն կողմին, որի դիմումն առաջինն է մուտքագրվել:

9. Ցանկում ներառված նույն դահլիճը սույն կարգով քարոզչության միևնույն կողմին տրամադրվում է մեկ անգամ և մինչև 3 ժամ տևողությամբ: